

Կ-194¹-19.06.2019-ՏՏԳԲ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 64-րդ, 70-րդ, 71-րդ եւ 76-րդ հոդվածների վերնագրերից եւ հոդվածների տեքստերից հանել «ֆոնդի» բառը:

Հոդված 2. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի «հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով» եւ «հարյուրհիսնապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափով» բառերը համապատասխանաբար փոխարինել «հարյուրապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափով» եւ «երեքհարյուրապատիկից մինչեւ չորսհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 65-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 65. Հատատեղերի օգտագործման, բնափայտի մթերման եւ դուրսբերման սահմանված կարգը խախտելը, ապօրինի ձեռք բերված անտառանյութը տեղափոխելը

Հատատեղի օգտագործման, բնափայտի մթերման ու դուրսբերման սահմանված կարգը խախտելը, ապօրինի ձեռք բերված անտառանյութը տեղափոխելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից մինչեւ չորսհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 66-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 66. Ծառերը, թփերը ապօրինի հատելը կամ ոչնչացնելը, պետական, համայնքային կամ այլ անձանց սեփականություն հանդիսացող բուսածածկը ոչնչացնելը կամ մինչեւ աճի դադարեցման աստիճանի վնասելը

Անտառային հողերում, ինչպես նաեւ անտառային հողերի մեջ չմտնող տարածքներում ծառերը, թփերը ապօրինի հատելը կամ ոչնչացնելը, կամ հատումներն արգելված ծառերը, թփերը հատելը կամ ոչնչացնելը, պետական, համայնքային կամ այլ անձանց սեփականություն հանդիսացող բուսածածկը ոչնչացնելը կամ մինչեւ աճի դադարեցման աստիճանի վնասելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից մինչեւ երեքհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի «հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով» եւ «հարյուրհիսնապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի» բառերը համապատասխանաբար փոխարինել «հարյուրապատիկից մինչեւ

երկուհարյուրապատիկի չափով» եւ «երեքհարյուրապատիկից մինչեւ չորսհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի «հարյուրապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի «հարյուրհիսնապատիկի չափով» բառերը փոխարինել «երեքհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ մասի «հարյուրհիսնապատիկի չափով» բառերը փոխարինել «երեքհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի «հիսունապատիկի չափով» եւ «հարյուրապատիկի չափով» բառերը համապատասխանաբար փոխարինել «հարյուրապատիկի չափով» եւ «երկուհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 10. Օրենսգրքի 77-րդ հոդվածի վերնագրում եւ տեքստում «անտառային ֆոնդում» բառերը փոխարինել «անտառային հողերում» բառերով:

Հոդված 11. Օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի «հիսնապատիկից մինչեւ ութսունապատիկի չափով» եւ «հարյուրապատիկից մինչեւ հարյուրհիսնապատիկի չափով» բառերը համապատասխանաբար փոխարինել «հարյուրապատիկից մինչեւ հարյուրվաթսունապատիկի չափով» եւ «երկուհարյուրապատիկից մինչեւ երեքհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 12. Օրենսգրքի 79-րդ հոդվածի շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 79. Հրկիզման կամ կրակի հետ անփույթ վարվելու հետեւանքով անտառներում ծառերը, թփերը, մատղաշը եւ մշակաբույսերը ոչնչացնելը կամ վնասելը

Հրկիզման հետեւանքով անտառներում ծառերը, թփերը, մատղաշը եւ մշակաբույսերը ոչնչացնելը կամ վնասելը`

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ` սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ` երեքհարյուրհիսնապատիկի չափով:

Կրակի հետ անփույթ վարվելու հետեւանքով անտառներում ծառերը, թփերը, մատղաշը եւ մշակաբույսերը ոչնչացնելը կամ վնասելը, ինչպես նաեւ անտառների հակահրդեհային կանոնները խախտելը`

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ` սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրվաթսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ` երեքհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 13. Օրենսգրքի 79.1-րդ հոդվածի 2-րդ մասի «հիսնապատիկի չափով» եւ «հարյուրապատիկի չափով» բառերը համապատասխանաբար փոխարինել «հարյուրապատիկի չափով» եւ «երկուհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 14. Օրենսգրքի 85.2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 85.2. Խողանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում բուսածածկն այրելը

Խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ հողերում այրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրհիսնապատիկի չափով:

Խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում այրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երեքհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 15. Օրենսգրքի 88-րդ հոդվածի՝

1) վերնագրից հանել «տեսակների իրականացման» բառերը.

2) 1-ին մասից հանել «տեսակների որսի իրականացման» բառերը:

Հոդված 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Երկրորդ ընթերցում

Տեղեկանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՈՒՄՈՒՄ ՓՈՓՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 64-րդ, 70-րդ, 71-րդ եւ 76-րդ հոդվածների վերնագրերից եւ հոդվածների տեքստերից հանել «ֆոնդի» բառը:

Հոդված 2. Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի «հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով» եւ «հարյուրհիսնապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափով» բառերը համապատասխանաբար փոխարինել «հարյուրապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափով» եւ «երեքհարյուրապատիկից մինչեւ չորսհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 65-րդ հոդվածը շարադրել հետևյալ **նոր** խմբագրությամբ.

«Հոդված 65. Հատատեղերի օգտագործման, բնափայտի մթերման եւ դուրսբերման սահմանված կարգը խախտելը, ապօրինի ձեռք բերված անտառանյութը տեղափոխելը

Հատատեղի օգտագործման, բնափայտի մթերման ու դուրսբերման սահմանված կարգը խախտելը, ապօրինի ձեռք բերված անտառանյութը տեղափոխելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափով,

իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից մինչեւ չորսհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 4. Օրենսգրքի 66-րդ հոդվածը շարադրել ~~հետևյալ~~ **հոդ** խմբագրությամբ.

«Հոդված 66. Ծառերը, թփերը ապօրինի հատելը կամ ոչնչացնելը, պետական, համայնքային կամ այլ անձանց սեփականություն հանդիսացող բուսածածկը ոչնչացնելը կամ մինչեւ աճի դադարեցման աստիճանի վնասելը

Անտառային հողերում, ինչպես նաեւ անտառային հողերի մեջ չմտնող տարածքներում ծառերը, թփերը ապօրինի հատելը կամ ոչնչացնելը, կամ հատումներն արգելված ծառերը, թփերը հատելը կամ ոչնչացնելը, պետական, համայնքային կամ այլ անձանց սեփականություն հանդիսացող բուսածածկը ոչնչացնելը կամ մինչեւ աճի դադարեցման աստիճանի վնասելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից մինչեւ երեքհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի «հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով» եւ «հարյուրհիսնապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի» բառերը համապատասխանաբար փոխարինել «հարյուրապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափով» եւ «երեքհարյուրապատիկից մինչեւ չորսհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի «հարյուրապատիկի չափով» բառերը փոխարինել «երկուհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի «հարյուրհիսնապատիկի չափով» բառերը փոխարինել «երեքհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ մասի «հարյուրհիսնապատիկի չափով» բառերը փոխարինել «երեքհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի «հիսունապատիկի չափով» եւ «հարյուրապատիկի չափով» բառերը համապատասխանաբար փոխարինել «հարյուրապատիկի չափով» եւ «երկուհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 10. Օրենսգրքի 77-րդ հոդվածի վերնագրում եւ տեքստում «անտառային ֆոնդում» բառերը փոխարինել «անտառային հողերում» բառերով:

Հոդված 11. Օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի «հիսնապատիկից մինչեւ ութսունապատիկի չափով» եւ «հարյուրապատիկից մինչեւ հարյուրհիսնապատիկի չափով» բառերը համապատասխանաբար փոխարինել «հարյուրապատիկից մինչեւ հարյուրվաթսունապատիկի չափով» եւ «երկուհարյուրապատիկից մինչեւ երեքհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 12. Օրենսգրքի 79-րդ հոդվածի շարադրել ~~հետևյալ~~ **հոդ** խմբագրությամբ.

«Հոդված 79. Հրկիզման կամ կրակի հետ անփույթ վարվելու հետեւանքով անտառներում ծառերը, թփերը, մատղաշը եւ մշակաբույսերը ոչնչացնելը կամ վնասելը

Հրկիզման հետեւանքով անտառներում ծառերը, թփերը, մատղաշը եւ մշակաբույսերը ոչնչացնելը կամ վնասելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երեքհարյուրհիսնապատիկի չափով:

Կրակի հետ անփույթ վարվելու հետեւանքով անտառներում ծառերը, թփերը, մատղաշը եւ մշակաբույսերը ոչնչացնելը կամ վնասելը, ինչպես նաեւ անտառների հակահրդեհային կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրվաթսունապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երեքհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 13. Օրենսգրքի 79.1-րդ հոդվածի 2-րդ մասի «հիսնապատիկի չափով» եւ «հարյուրապատիկի չափով» բառերը համապատասխանաբար փոխարինել «հարյուրապատիկի չափով» եւ «երկուհարյուրապատիկի չափով» բառերով:

Հոդված 14. Օրենսգրքի 85.2-րդ հոդվածը շարադրել ~~հետեւյալ~~ **որ** խմբագրությամբ.

«Հոդված 85.2. Խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում բուսածածկն այրելը

Խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ հողերում այրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրհիսնապատիկի չափով:

Խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում այրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երեքհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 15. Օրենսգրքի 88-րդ հոդվածի՝

- 1) վերնագրից հանել «տեսակների իրականացման» բառերը.
- 2) 1-ին մասից հանել «տեսակների որսի իրականացման» բառերը:

Հոդված 16. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին » (փաստաթղթային կոդ՝ Կ-194-19.06.2019-ՏՏԳԲ-011/0), «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»(փաստաթղթային կոդ՝ Կ-194¹ -19.06.2019-ՏՏԳԲ-011/0) եւ «Բնապահպանական իրավախախտումների հետեւանքով կենդանական եւ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-194² -19.06.2019-ՏՏԳԲ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններ ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
Կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ եւ 3-րդ հոդվածներում առաջարկում ենք «հետեւյալ խմբագրությամբ» բառերը փոխարինել «նոր խմբագրությամբ» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
	Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում «Հայաստանի Հանրապետության» բառերից հետո լրացնել «բույսերի» բառը:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է
	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ, 4-րդ, 12-րդ և 14-րդ հոդվածներում «հետեւյալ խմբագրությամբ» բառերն առաջարկում ենք փոխարինել «նոր խմբագրությամբ» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին»	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է

	<p>օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:</p> <p>«Բնապահպանական իրավախախտումների հետեւանքով կենդանական եւ բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին »Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի Նախագծի վերնագրից եւ 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ եւ 18-րդ հոդվածի 3-րդ մասերը»:</p>	<p>Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխությունը</p>	<p>Ընդունվել է</p>
--	---	---	--------------------